ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

ՀՀ Վայոց ձորի մարզխորհրդի նիստի

Ք. Եղեգնաձոր **24 հոկտեմբերի 2025թ.**

Ժամը՝ 11:00

Մարզխորհրդի նիստը նախագահում է ՀՀ Վայոց ձորի մարզպետ Վահագն Արսենյանը:

Քարտուղարում է ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ Էլյա Սարգսյանը:

Մարզխորհրդի նիստի մասնակցում են

- ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալները
- ՀՀ Վայոց ձորի համայնքների ղեկավարներ
- ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի աշխատակիցներ
- ՀՀ Վայոց ձորի մարզի համայնքապետարանների աշխատակազմերի ներկայացուցիչներ

ՀՀ Վայոց ձորի մարզխորհրդի նախագահ, մարզպետ Վահագն Արսենյանը ողջունեց ներկաներին, ապա նիստի օրակարգի հաստատումից հետո ձայնը փոխանցեց զեկուցողներին:

Օրակարգում՝

1.ՀՀ Վայոց ձորի մարզում 2025 թվականի նախորդ ինն ամիսների ընթացքում գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության ոլորտում կատարված և ընթացքի մեջ գտնվող աշխատանքների վերաբերյալ:

2. ՀՀ Վայոց ձորի մարզի Արենի և Եղեգիս համայնքներում 2025 թվականին իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների վերաբերյալ:

3. 2025 թվականի նախորդ ինն ամիսների ընթացքում ՀՀ Վայոց ձորի մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման վերաբերյալ:

4. ՀՀ Վայոց ձորի մարզում առողջապահության և սոցիալական ոլորտում նախորդ ինն ամիսների ընթացքում կատարված և ընթացքի մեջ գտնվող աշխատանքների վերաբերյալ:

5. ՀՀ Վայոց ձորի մարզում 2024 թվականից տեղափոխված, 2025 թվականին հաստատված սուբվենցիոն ծրագրերի ընթացքի վերաբերյալ:

6.ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքում 2024 թվականից տեղափոխված, 2025 թվականին հաստատված/ընթացող սուբվենցիոն ծրագրերի ընթացքի վերաբերյալ:

7. ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքում 2024 թվականից տեղափոխված, 2025 թվականին հաստատված/ընթացող սուբվենցիոն ծրագրերի ընթացքի վերաբերյալ:

8.ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքում 2024 թվականից տեղափոխված, 2025 թվականին հաստատված/ընթացող սուբվենցիոն ծրագրերի ընթացքի վերաբերյալ:

9.ՀՀ Վայոց ձորի մարզի Արենի համայնքում 2024 թվականից տեղափոխված, 2025 թվականին հաստատված/ընթացող սուբվենցիոն ծրագրերի ընթացքի վերաբերյալ:

10.ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքում 2024 թվականից տեղափոխված, 2025 թվականին հաստատված/ընթացող սուբվենցիոն ծրագրերի ընթացքի վերաբերյալ:

Օրակարգի առաջին հարցի շուրջ զեկուցեց ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Գեղամ Մարգարյանը՝ ներկայացնելով 2025 թվականի վերջին ինն ամիսների կտրվածքով գյուղատնտեսության և բնապահպանության ոլորտներում կատարված և ընթացքի մեջ գտնվող աշխատանքների պատկերը:

2025 թվականին մարզում կատարված ցանքերը
Ընդամենը ցանքեր՝ 3099,4հա/190,6հա պակաս 2024թ համեմատ

որից՝ հացահատիկ և հատիկաընդեղեն - 1422,7հա/ 100հա- պակաս

բանջար բոստանային մշակաբույսեր - 192,6հա/ 39,9հա պակաս

կարտոֆիլ - 65,2հա/ 20,1 հա պակաս

կերային մշակաբույսեր	-	1409,2հա/ 30,2հա պակաս
տեխնիկական մշակաբույսեր	-	9,9հա/ 0,1 հա, պակաս

ս/թ հոկտեմբերի 15-ի դրությամբ արտադրվել է՝

հացահատիկի և հատիկաընդեղեն մշակաբույսերի 2565 տոննա

բանջար բոստանային մշակաբույսեր	-	1900 տոննա բերք
կարտոֆիլի	-	517 տոննա բերք
կերային մշակաբույսեր	-	17000 տոննա
պտուղ	-	3500 տոննա
խաղող	-	5300 տոննա

Արենիի համայնքապետարանում կազմակերպել ենք հանդիպում – քննարկում խաղող արտադրողների և մթերող կազմակերպությունների հետ՝ խաղողի մթերման գործընթացը անցնցում կազմակերպելու համար: Քննարկվել են Արենի սորտի խաղողի հետ կապված հարցեր:Արտադրվել է 5300 տոննա խաղող, որից 1200 տոնան մթերվել է: ՀՀ կառավարության կողմից կատարվել է Արենի տեսակի խաղողի մթերման սուբսիդավորում՝ 1կգ-ի համար 70 դրամով : Մթերման աշխատանքները ընթացքի մեջ են:1500 տոննա խաղող օգտագործվել է սեփական կարիքների համար:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թ. մարտի 27-ի N 356-L որոշմամբ հաստատված «Բուսաբուծության աջակցության 2025 թվականի» ծրագրի շրջանակներում ըստ օպերատիվ տվյալների՝ 129 շահառու կատարել է 270,39 հա հացահատիկային և կերային մշակաբույսերի ցանք: Կառավարության կողմից կսուբսիդավորվի 20,549 մլն դրամ: Նույն ծրագրով կատարվում է աշնանացան հացահատիկային մշակաբույսերի ցանք, կատարվել է 144հա աշնանացանի ցանք, աշխատանքները ընթացքի մեջ են:

Վարչության անմիջական վերահսկողությամբ անասնաբուժական ծառայությունների կողմից պետ. պատվերով նախատեսված անասնաբուժական ախտորոշիչ և կանխարգելիչ միջոցառումները իրականացվել են պատշաճ կերպով: Վարակիչ հիվանդություններ չեն հայտնաբերվել: Չնայած ՀՀ յոթ մարզերում արձանագրվել է դաբաղ հիվանդություն, մեր մարզում հիվանդություն չի արձանագրվել:

Վարչության կողմից բնակավայրերում ուսումնասիրվել և գնահատվել է արտակարգիրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց հասցված վնասների չափը.

- Վայրի և գիշատիչ կենդանիների, մասնավորապես արջի կողմից մարզի համայնքներում և բնակավայրերում հասցված վնասի չափը 30.06.2025թ դրությամբ կազմել է մոտ 3,42 մլն. դրամ:
- Բույսերի պաշտպանության ծրագրով մարզին անվճար տրամադրվել է 69,6լ «Բրոմոցիդ ֆլյուիդ» մկնասպան թունանյութը, որը բաշխվել է մարզի Եղեգնաձոր, Արենի, Եղեգիս, Վայք և Ջերմուկ համայնքներին՝ 870 հեկտար վարակված վարելահողերի վրա կրծողների դեմ քիմիական պայքար կազմակերպելու համար:
- **Ոռոգման** սեզոնի մեկնարկից առ այսօր մարզի բնակավայրերից ստացվել են բողոքներ՝ ոռոման ջրի անբավարարության պատճառով:

Հիմնական պատկերը ըստ համայնքների հետևյալն է .

1. Եղեգնաձոր համայնք

Եղեգնաձոր համայնքի բնակավայրերում առկա է ոռոգման ջրի բավարար քանակություն, բացառությամբ Մալիշկա բնակավայրի որոշ հանդամասերում:

2. Վայք համայնք

Ք. Վայք – Գերեզմանոցի հարակից թաղամասում ոռոգման ջուր չկա, տնամերձերը ժամանակավորապես ոռոգվում են խմելու ջրով, որը թույլատրվել է մինչև 2025 թվականի վերջը:Ազատեկ, Փոռ, Զեդեա բնակավայրերի ոռոգման ջրագծերը գտնվում են ծայրահեղ վատ վիճակում, ջրի կորուստը կազմում է 30-40%: Ջրագծերը ֆիզիկապես և բարոյապես մաշված են (1970-1975թթ):Վայք համայնքի մնացած 13 բնակավայրերում անխափան մատակարարվել է ոռոգման ջուր:Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել պաշտոնական գրությամբ՝ տրամադրել 570-600մլն. ՀՀ դրամ՝ խնդրահարույց ջրագծերի վերանորոգման և վերակառուցման աշխատանքների համար:

3. Արենի համայնք

Արենի, Արփի, Ռինդ, Չիվա, Ելփին, Խաչիկ, Աղավնաձոր բնակավայրերի հողատարածքները ոռոգվում են «Խանջյանի առվով»: ՓՀԷԿ-երի անկանոն

աշխատանքների պատճառով ջուրը տրամադրվում է ընդհատումներով: Համայնքի մնացած 2 բնակավայրերում ոռոգման ջուրը բավարար է:

4. Եղեգիս համայնք

Համայնքի բնակավայրերում կա բավարար քանակի ոռոգման ջուրը, սակայն ջրատարները հիմնականում հողաթմբային են և ունեն ոռոգման ջրի մեծ կորուստ:Եղեգիս համայնքը ընդգրկված չէ ջրօգտագործողների ընկերության համակարգում:

5. Ջերմուկ համայնք

Ջերմուկ համայնքի բնակավայրերում տրամադրվել է ոռոգման ջրի բավարար քանակություն:

Այցելություններ են կատարվել Արենի, Եղեգիս և մասնակի Եղեգնաձոր, Վայք համայնքների բնակավայրեր, քննարկվել են գյուղատնտեսության ոլորտի վերաբերյալ բոլոր հիմնախնդիրները, ներկայացվել են գյուղատնտեսության պետական օժանդակության 13 ծրագրերի վերաբերյալ տեղեկատվություն:

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Ս/թ հունվարի 1-20-ը սիգի ձվադրման ժամանակահատվածում իրականացվել են անհատական և համատեղ այցեր մարզի համայնքներ (բնակավայրեր)՝ սիգի ապօրինի վաճառքը հայտնաբերելու և կանխելու նպատակով: Աշխատանքների արդյունքները ամփոփվել և ներկայացվել եմ ՏԿԵ նախարարություն:

- ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2025 թվականի փետրվարի 5-ի N 25-Ա որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի անդամների հետ միասին իրականացվել են այցելություններ մարզի համայնքներում (բնակավայրում) գործող 14 քարի արտադրամասեր՝ քարի վերամշակմամբ զբաղվող տնտեսավարող կազմակերպությունների բնապահպանական օրենսդրության նորմերի պահպանման ու կատարման նկատմամբ ուսումնասիրություններ իրականացնելու նպատակով (ՇՄԱԳ): Ալցելությունների վերաբերյալ կազմվել է հաշվետվություն և ներկայացվել մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարին:Այցելություններ են կազմակերպվել Եղեգնաձոր և Եղեգիս համայնքների Գետափ և Քարագլուխ բնակավայրեր՝ կրթահամալիրների կառուցման տարածքներում ՇՄԱԳ

փորձաքննության: ՀՀ Վայոց ձորի մարզպետի հանձնարարությամբ ուսումնասիրել է մարզում հանքարդյունաբերությամբ զբաղվող սյուբեկտերի գործունեությունը, անց է կացվել ՇՄԱԳ փորձաքննություն:

Ցանկում ընդգրկված են եղել 15 հանքարդյունաբերող, որոնք զբաղվում են հետևյալ գործունեությամբ՝ քվարցիտների, քարերի, հրաբխային ավազի, ավազակոպճային խառնուրդի, ինչպես նաև բազմամետաղ հանքարդյունաբերությամբ (ՋԻԷՆԷ Գոլդ Մայնինգ ՍՊԸ՝ Զառիթափ բնակավայր, Սոֆի բինա ոսկու հանքարդյունաբերություն):ՈՒսումնասիրությունների արդյունքները ներկայացվել են մարզպետի տեղակալին:

Մասնակցել ենք նաև Վայք համայնքի Զառիթափ և Ազատեկ բնակավայրերում <<Վայք գոլդ ռիսորսիս>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված Վայք համայնքի Ազատեկի ոսկի-բազմամետաղային հանքավայրի վերագնահատողական երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման վերաբերյալ հանրային քննարկումներին:

Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամը (FPWC) Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնքում իրականացնում է "Մեղմելով կլիմայի փոփոխությամբ պայմանավորված մարդ-վայրի կենդանի ահագնացող կոնֆլիկտը Հայաստանում" ծրագիրը, որին 150 մասնակիցներից, 30 մասնակցի տրամադրվել է 500 000 ական դրամի չափով մեղվաընտանիքներ և մեղվապահական գույք: Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամը նվիրատվության հիմունքով Եղեգիս համայնքին տրամադրել է 15 էլեկտրական հովիվ: Ծրագրի մեջ ներառված են 51 շահառուներ՝ 18 հա տնամերձ հողամաս: Բնապահպանական կազմակերպության կողմից 2025 թվականին հիմնվել է 40 հա վայրի կաղնու, նշենու, տանձենու և խնձրենու ծառատեսակներ:

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետի տեղակալ Գրիգոր Բաբաջանյանը՝ ներկայացնելով 2025 թվականին Արենի և Եղեգիս համայնքներում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքները;

Հաշվետու ժամանակաշրջանում համաձայն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի **29.11.2024** թվականի թիվ **2881-Ա** հրամանով

հաստատված աշխատանքային ծրագրի և ՀՀ Վայոց ձորի մարզպետի **27.05.2025** թվականի թիվ **142-Ա** որոշման պահանջների՝ **2025** թվականի **հունիսի 2-ից 13-ն**, իրավական և մասնագիտական հսկողություն է իրականացվել ՀՀ Վայոց ձորի մարզի **Արենի** համայնքում: Իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքում հայտնաբերված թերությունների վերաբերյալ կազմվել է արձանագրություն:

Հսկողության ժամանակ արձանագրվել են թվով 19 թերություններ և բացթողումներ **<<Տեղական ինքնակառավարման մասին>>, << Բյուջետային համակարգի մասին>>, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>>, <<Քաղաքաշինության մասին>>, <<Քաղաքացիական պաշտպանության մասին>> և <<Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին>> ՀՀ օրենքների** պահանջների կատարման ուղղությամբ: Թերությունների և բացթողումների վերաբերյալ սահմանված կարգով կազմվել է արձանագրություն՝ քննարկվել և սահմանվել են թերությունների վերացման ժամկետները: Կազմված արձանագրությունը և հայտնաբերված խախտումները սահմանված ժամկետներում ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն և տեղադրվել են մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայքում: Այս պահին արձանագրված 19 թերություններից 16-ը վերացվել է, 3 թերությունների վերացման ուղղությամբ իրականացվում են աշխատանքներ:

Համաձայն ՀՀ Վայոց ձորի մարզպետի **09.09.2025** թվականի թիվ **241-Ա** որոշման պահանջների՝ **սեպտեմբերի 15-ից 26-ն** ընկած ժամանակահատվածում իրավական և մասնագիտական հսկողություն է իրականացվել ՀՀ Վայոց ձորի մարզի **Եղեգիս** համայնքում: Իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքում հայտնաբերված թերությունների վերաբերյալ կազմվել է արձանագրություն, որի համաձայն Եղեգիս համայնքում հայտնաբերվել են թվով 14 թերություններ և բացթողումներ՝ **<<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Քաղաքացիական պաշտպանության մասին>> և <<Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին>> ՀՀ օրենքների** պահանջների կատարման ուղղությամբ: Թերությունների և բացթողումների վերացման նպատակով համայնքին տրվել է 20 օր ժամանակ,

ձեռնարկվում են համապատասխան միջոցներ թերությունների վերացման ուղղությամբ:

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետի պաշտոնում փորձագետ Գվիտոն Դավթյանը՝ ներկայացնելով համայնքերի բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման ընթացքն ինն ամիսների կտրվածքով:

2025 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ մարզի 5 համայնքների տեղական բյուջներով ընդամենը 9 ամսվա համար նախատեսվել է հավաքագրել **2 միլիարդ 893 միլիոն 121 հազար 8 հարյուր ՀՀ դրամ**, տեղական բյուջեներին ամրագրված ընդամենը եկամուտներից 2025 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ հավաքագրվել է **2 միլիարդ 885 միլիոն 702 հազար 7 հարյուր ՀՀ դրամ**, կամ տեղական բյուջեներին ամրագրված ընդամենը եկամուտների հավաքագրումը կատարվել է **99.7%-ով**, նախորդ տարվա համեմատ աճը կազմել է 3.8 %, որից սեփական եկամուտներ նախատեսվել են հաշվետու ժամանակաշրջանի համար **993 միլիոն 391 հազար 2 հարյուր ՀՀ դրամ**, փաստացի հավաքագրվել է **984 միլիոն 308 հազար 1 հարյուր ՀՀ դրամ** կամ կատարվել է **99.1%-ով,** նախորդ տարվա համեմատ աճը կազմել է 15.4 %:

- **Գույքային հարկեր անշարժ գույքից**՝ պլանավորվել է 9 ամսվա համար հավաքագրել **131 միլիոն 45 հազար ՀՀ դրամ**, փաստացի 9 ամսվա կտրվածքով հավաքագրվել է **111 միլիոն 133 հազար 9 հարյուր ՀՀ դրամ կամ կատարվել է 84.8 %-ով,** աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կազմում է 47.7**%:**
- **Գույքահարկ փոխադրամիջոցներից**՝ պլանավորվել է հավաքագրել **226 միլիոն 214 հազար 2 հարյուր ՀՀ դրամ**, փաստացի հավաքագրվել է **203 միլիոն 403 հազար 7 հարյուր ՀՀ դրամ, փաստացի հավաքագրումը կազմում է 89.9%:**
- **Տեղական տուրքեր**՝ պլանավորվել է հավաքագրել **24 միլիոն 442 հազար 8 հարյուր ՀՀ դրամ**, փաստացի հավաքագրվել է **41 միլիոն 133 հազար 5 հարյուր ՀՀ դրամ, կատարվել է 168.3%-ով,** նախորդ տարվա համեմատ աճը կազմել է 13.5%:
- **Գույքի /հողի/ վարձակալություն**՝ պլանավորվել է հավաքագրել **338 միլիոն 896 հազար 4 հարյուր ՀՀ դրամ,** փաստացի հավաքագրվել է **332 միլիոն 138 հազար 8 հարյուր ՀՀ դրամ, կատարվել է 98.0 %-ով:**

- **Տեղական վճարներ**՝ նախատեսվել է **170 միլիոն 762 հազար 6 հարյուր ՀՀ դրամ,** փաստացի հավաքագրվել **166 միլիոն 136 հազար 4 հարյուր ՀՀ դրամ, կատարվել է 97.3%-ով**, այդ թվում՝
- **Աղբահանության վճար**՝ նախատեսվել է **54 միլիոն 539 հազար 6 հարյուր ՀՀ դրամ,** փաստացի հավաքագրվել է **48 միլիոն 400 հազար 2 հարյուր ՀՀ դրամ** կամ կատարվել է **88.7%-ով**:
- Պետական տուրքեր նախատեսվել է հավաքագրել **5 միլիոն 411 հազար 3 հարյուր ՀՀ դրամ,** հավաքագրումը կազմել է **8 միլիոն 641 հազար 6 հարյուր ՀՀ դրամ կամ կատարվել է 159.7%-ով:**
- Այլ եկամուտներից մուտքեր՝ **96 միլիոն 619 հազար ՀՀ դրամ**, հավաքագրվել է **121 միլիոն 720 հազար 1 հարյուր ՀՀ դրամ** կամ կատարվել է **126.0 տոկոսով:**
- Համահարթեցման կարգով ՀՀ 2025 թվականի 9 ամսվա համար նախատեսված դոտացիան ամբողջությամբ ֆինանսավորվել է՝ **1 միլիարդ 786 միլիոն 134 հազար ՀՀ դրամ:**

Ըստ առանձին համայնքների 2025 թվականի տարեկան բյուջեներին ամրագրված եկամուտների հավաքագրման ընթացքի վերաբերյալ

<u>Եղեգնաձոր համայնք.</u>

Բյուջեով տարեկան եկամուտներ պլանավորվել է 927մլն.873հազար 3 հարյուր ՀՀ դրամ,որից սեփական եկամուտներ պլանավորվել են **<u>279մլն. 808հազար 1 հարյուր. Դրամ</u>**: Ինն ամսվա համար ընդամենը եկամուտների կատարողականը կազմում է 104.6% կամ **703 մլն.803 հազար 4 հարյուր** ՀՀ դրամ: Աճը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ կազմում է 8.5% կամ 54 մլն.892 հազար 1 հարյուր ՀՀ դրամ:

Դոտացիան աճել է 15.2%-ով կամ 42մլն.850 հազար ՀՀ դրամ:

2025 թվականի հաշվետու ժամանակահատվածի ընթացքում սեփական եկամուտների հավաքագրումն իրականցվել է 117.3 տոկոսով և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավել հավքագրված սեփական եկամուտները կազմում է **23մլն.396 հազար 6 հարյուր** ՀՀ դրամ կամ ավել է կատարվել 12.9%-ով:%: Մասնավորապես

- **Անշարժ գույքի հարկ**՝ պլանավորվել է **23 մլն.947 հազար 5 հարյուր** ՀՀ դրամ, փաստացի հավաքագրվել է **28 մլն.506 հազար 9 հարյուր ՀՀ** դրամ, կատարվել է 119 %-ով: Փաստացի ավել հավաքագրված գումարը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համար կազմում է 5 մլն.564 հազար 9 հարյուր ՀՀ դրամ կամ 24.3%-ով:
- **Գույքահարկ** փոխադրամիջոցներից՝ պլանավորվել է **66մլն. 888 հազար** ՀՀ դրամ, փաստացի հավաքագրվել է **70 մլն.** ՀՀ դրամ, կատարվել է 104.7%-ով: Աճը նախորդ տարվա համեմատ կազմում է 14.1% կամ 8 մլն.652 հազար 7 հարյուր ՀՀ դրամ:
- **Տեղական տուրքեր՝ 6մլն.350 հազար 3 հարյուր** ՀՀ դրամ, փաստացի հավաքագրվել է **6մլն.910 հազար 5 հարյուր** ՀՀ դրամ, կատարվել է 108.8%-ով:
- **Գույքի /հողի/ վարձակալություն՝ 9 մլն. 750 հազար** ՀՀ դրամ, փաստացի հավաքագրվել է **12 մլն. 575 հազար 5 հարյուր** ՀՀ դրամ, կատարվել է 129 %-ով: Փաստացի ավել հավաքագրված գումարը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համար կազմում է **3 մլն. 42 հազար 5 հարյուր** ՀՀ դրամ:
- **Տեղական վճարներ՝** նախատեսվել է 44 մլն. 509 հազար 3 հարյուր ՀՀ դրամ, փաստացի հավաքագրվել է 48 մլն. 453 հազար 9 հարյուր ՀՀ դրամ, կատարվել է 108.9%-ով, այդ թվում՝
- **Աղբահանության վճար՝** նախատեսվել է 17 մլն. 280 հազար դրամ, փաստացի հավաքագրվել է 18 մլն. 805 հազար 8 հարյուր ՀՀ դրամ կամ կատարվել է 108.8%-ով:
- **Այլ եկամուտներ՝** նախատեսվել է **21 մլն. 259 հազար 8 հարյուր ՀՀ դրամ,** փաստացի հավաքագրվել է **36 մլն.716 հազար 2 հարյուր ՀՀ դրամ, կատարվել է 172.7 %-ով:**

<u>Ջերմուկ համայնք.</u>

Բյուջեով ընդամենը եկամուտներ պլանավորվել են՝ **938 մլն.624 հազար 9 հարյուր ՀՀ դրամ**: Ընդամենը եկամուտների հավաքագրումը ինն ամսվա համար կազմում է **580 մլն.775 հազար ՀՀ դրամ**, աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կազմում է **102 մլն 973 հազար ՀՀ դրամ կամ 21.6%:**

Բյուջեով սեփական եկամուտներ տարեկան պլանավորվել են **465 մլն. 955 հազար 7 հարյուր ՀՀ դրամ:** Սեպտեմբերի 30-ի դրությամբ սեփական եկամուտների

պլանավորումը կազմում է **349 մլն. 260 հազար 5 հարյուր** ՀՀ դրամ, իսկ հավաքագրումը՝ **99.3% կամ 346 մլն 730 հազար 1 հարյուր ՀՀ դրամ**: Աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կազմում է 27.7% կամ ավել հավաքագրվել է **75 մլն.323 հազար 9 հարյուր ՀՀ դրամ**:

- **Անշարժ գույքի հարկ՝ պլանավորվել է 56 մլն. 806 հազար 5 հարյուր ՀՀ դրամ**, փաստացի հավաքագրվել է **43 մլն. 714 հազար 3 հարյուր ՀՀ** դրամ կամ կատարվել է 77.0%-ով: Նախորդ տարվա համեմատ աճը կազմում է 62.1% կամ ավել է հավաքագրվել 16 մլն.749 հազար ՀՀ դրամ:
- **Գույքահարկ** փոխադրամիջոցներից՝ **45 մլն. 571 հազար 9 հարյուր ՀՀ դրամ**, փաստացի հավաքագրվել է **31 մլն. 42 հազար 4 հարյուր ՀՀ դրամ**, կատարվել է 68.1%-ով:
- **Տեղական տուրքեր՝ 5 մլն. 255 հազար 5 հարյուր ՀՀ դրամ**, փաստացի հավաքագրվել է **5 մլն. 640 հազար 1 հարյուր ՀՀ դրամ**, կատարվել է 107.3%-ով:
- **Գույքի /հողի/ վարձակալություն՝ 167 մլն.606** ՀՀ դրամ, փաստացի հավաքագրվել է **172 մլն. 807 հազար 9 հարյուր ՀՀ դրամ**, կատարվել է 103.1%-ով, փաստացի ավել հավաքագրված գումարը, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համար, կազմում է **13 մլն. 494 հազար 1 հարյուր** ՀՀ դրամ կամ աճը կազմում է 8.5%:
- **Տեղական վճարներ՝** նախատեսվել է **65 մլն. 888 հազար 3 հարյուր** ՀՀ դրամ, փաստացի հավաքագրվել է **72 մլն.895 հազար 2 հարյուր** ՀՀ դրամ, կատարվել է 110.6 %-ով, աճը կազմել է 37 մլն. 265 հազար 9 հարյուր ՀՀ դրամ, այդ թվում՝
- **Աղբահանության վճար՝** նախատեսվել է **14 մլն. 422 հազար 1 հարյուր** ՀՀ դրամ, փաստացի հավաքագրվել է **14 մլն. 587 հազար 6 հարյուր** ՀՀ դրամ կամ կատարվել է 101.1%-ով: **Դոտացիան աճել է 17.2% կամ 22մլն.547 հազար 6 հարյուր ՀՀ դրամ:**
- **Այլ եկամուտներ՝** նախատեսվել է **7 մլն. 896 հազար 1 հարյուր ՀՀ դրամ,** փաստացի հավաքագրվել է **20 մլն.310 հազար 1 հարյուր ՀՀ դրամ, կատարվել է 257.2 %-ով:**

<u>Վայք համայնք.</u>

Բյուջեով ընդամենը եկամուտներ պլանավորվել են՝ **1 մլդ. 96 մլն. 990 հազար 8 հարյուր ՀՀ դրամ**: 2025 թվականի ինն ամսվա պլանի համեմատ հավաքագրումը կազմել է 97.4%:

2025 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ սեփական եկամուտների հավաքագրումը կազմում է **252 մլն. 398 հազար 9 հարյուր ՀՀ դրամ**, որը պլանավորված հավաքագրման ենթակա սեփական եկամուտների 92.0 տոկոսն է: Նախորդ տարվա համեմատ ավել հավաքագրված սեփական եկամուտները կազմում է **9մլն. 240 հազար 9 հարյուր** ՀՀ դրամ կամ աճի տոկոսը կազմում է 3.8%:

- **Անշարժ գույքի հարկ՝** պլանավորվել է **23 մլն. 625 հազար դրամ**, փաստացի հավաքագրվել է **14 մլն.916 հազար 9 հարյուր ՀՀ** դրամ կամ կատարվել է 63.1%-ով:
- **Գույքահարկ** փոխադրամիջոցներից՝ **49 մլն. 408 հազար 3 հարյուր** ՀՀ դրամ, փաստացի հավաքագրվել է **44 մլն. 683 հազար 2 հարյուր** ՀՀ դրամ, կատարվել է 90.4%-ով:
- **Տեղական տուրքեր՝ 8 մլն. 100 հազար դրամ**, փաստացի հավաքագրվել է **9 մլն.423 հազար 7 հարյուր** ՀՀ դրամ, կատարվել է 116.3%-ով:
- **Գույքի վարձակալություն՝ 114 մլն. 397 հազար 6 հարյուր** ՀՀ դրամ, փաստացի հավաքագրվել է **111 մլն. 494 հազար 7 հարյուր** ՀՀ դրամ, կատարվել է 97.5%-ով: **Տեղական վճարներ՝** նախատեսվել է **20 մլն. 850 հազար ՀՀ դրամ**, փաստացի հավաքագրվել է **19 մլն. 58 հազար 1 հարյուր** ՀՀ դրամ, կատարվել է 91.4 %-ով:
- **Աղբահանության վճար՝** նախատեսվել է **9 մլն. 375 հազար** ՀՀ դրամ, փաստացի հավաքագրվել է **6 մլն. 916 հազար 4 հարյուր** ՀՀ դրամ կամ կատարվել է 73.8%-ով:
- **Այլ եկամուտներ՝** նախատեսվել է **54 մլն. 957 հազար 8 հարյուր ՀՀ դրամ,** փաստացի հավաքագրվել է **46 մլն. 465 հազար 8 հարյուր ՀՀ դրամ,** կատարվել է 84.5 %-ով:

<u>Արենի համայնք.</u>

Բյուջեով ընդամենը եկամուտներ պլանավորվել են՝ **788 մլն.80հազար 8 հարյուր ՀՀ դրամ՝** 2025 թվականի ինն ամսվա պլանի համեմատ հավաքագրումը կազմել է 101.9%:

Բյուջեով սեփական եկամուտներ պլանավորվել են **228 մլն. 689 հազար 8 հարյուր** ՀՀ դրամ: Բյուջեին ամրագրված սեփական եկամուտների 2025 թվականի ինն ամսվա հավաքագրումը կազմել է **137 մլն. 49 հազար 7 հարյուր** ՀՀ դրամ, որը պլանավորված հավաքագրման 107.7 տոկոսն է: Նախորդ տարվա համեմատ ավել

հավաքագրված սեփական եկամուտները կազմում է **19 մլն. 443 հազար 3 հարյուր** ՀՀ դրամ:

- **Անշարժ գույքի հարկ**՝ ինն ամսվա համար պլանավորվել է հավաքագրվել **16 մլն.916 հազար** ՀՀ դրամ, փաստացի հավաքագրվել է **19 մլն. 942 հազար** ՀՀ դրամ, կատարվել է 117.9%-ով, նախորդ տարվա համեմատ ավել հավաքագրումը կազմում է 8 մլն.100 հազար 9 հարյուր ՀՀ դրամ:
- **Գույքահարկ փոխադրամիջոցներից**՝ պլանավորվել է՝ **37 մլն. 346 հազար** ՀՀ դրամ փաստացի հավաքագրվել է **39 մլն 566 հազար 9 հարյուր** ՀՀ դրամ, կատարվել է 105.9%-ով:
- **Տեղական տուրքեր՝ 3 մլն. 987 հազար** ՀՀ դրամ, փաստացի հավաքագրվել է **18 մլն.287 հազար 2 հարյուր** ՀՀ դրամ, կատարվել է 458.7%-ով:
- **Գույքի /հողի/ վարձակալություն՝ 30 մլն. 279 հազար 8 հարյուր** ՀՀ դրամ, փաստացի հավաքագրվել է **25 մլն. 476 հազար 9 հարյուր** ՀՀ դրամ, կատարվել է 84.1%-ով:
- **Տեղական վճարներ**՝ նախատեսվել է 30 մլն.665 հազար ՀՀ դրամ, փաստացի հավաքագրվել է **20 մլն. 137 հազար 7 հարյուր** ՀՀ դրամ, կատարվել է 65.7%-ով, այդ թվում՝
- **Աղբահանության վճար**՝ նախատեսվել **է 5 մլն. 962 հազար 5 հարյուր** ՀՀ դրամ, փաստացի հավաքագրվել է **4 մլն. 202 հազար 7 հարյուր** ՀՀ դրամ կամ կատարվել է 70.5%-ով:
- **Այլ եկամուտներ՝** նախատեսվել է **8 մլն. 5 հազար 4 հարյուր ՀՀ դրամ,** փաստացի հավաքագրվել է **13 մլն. 638 հազար 9 հարյուր ՀՀ դրամ,** կատարվել է 170.4%-ով:

<u>Եղեգիս համայնք.</u>

Բյուջեով ընդամենը եկամուտներ պլանավորվել են՝ **386մլն.165 հազար 5 հարյուր ՀՀ դրամ:** Ընդամենը բուջեի ինն ամսվա կատարողականը նախատեսված պլանի նկատմամբ կազմում է 91.5%:

Բյուջեով սեփական եկամուտներ սեպտեմբերի 30-ի դրությամբ պլանավորվել են **67 մլն.713 հազար** ՀՀ դրամ: Բյուջեին ամրագրված սեփական եկամուտների կատարողականը կազմել է **43 մլն. 1 հազար 5 հարյուր** ՀՀ դրամ, որը պլանավորված

հավաքագրման 63.5 տոկոսն է: Փաստացի ավել հավաքագրված գումարը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համար կազմում է **3 մլն.829 հազար 5 հարյուր** ՀՀ դրամ կամ աճը կազմում է 9.8%:

- **Անշարժ գույքի հարկ՝** նախատեսվել է **9 մլն.750 հազար** ՀՀ դրամ, փաստացի հավաքագրվել է **4 մլն. 53 հազար 8 հարյուր** ՀՀ դրամ համեմատ կազմում է 41.6%:
- **Գույքահարկ փոխադրամիջոցներից՝ 27 մլն.**ՀՀ դրամ, փաստացի հավաքագրվել է **18 մլն.111 հազար 2 հարյուր** ՀՀ դրամ, կատարվել է 67.1%-ով:
- **Տեղական տուրքեր՝ 750 հազար** ՀՀ դրամ, փաստացի հավաքագրվել է **872 հազար ՀՀ** դրամ, կատարվել է 116.3%-ով:
- **Գույքի վարձակալություն՝ 16 մլն.863 հազար** ՀՀ դրամ, փաստացի հավաքագրվել է

  9 մլն 783 հազար 7 հարյուր ՀՀ դրամ, կատարվել է 58.0%-ով:
- **Տեղական վճարներ՝** նախատեսվել է **8 մլն.850 հազար** ՀՀ դրամ, փաստացի հավաքագրվել է **5 մլն. 591 հազար 5 հարյուր** ՀՀ դրամ, կատարվել է 63.2 %-ով:
- **Աղբահանության վճար՝** նախատեսվել է **7մլն. 5 հարյուր հազար** ՀՀ դրամ, փաստացի հավաքագրվել է **3 մլն 887 հազար 7 հարյուր** ՀՀ դրամ կամ կատարվել է 51.8%-ով:
- **Այլ եկամուտներ՝** նախատեսվել է **4 մլն. 500 հազարՀՀ դրամ,** փաստացի հավաքագրվել է **4 մլն. 589 հազար 2 հարյուր ՀՀ դրամ,** կատարվել է 102%-ով:

Օրակարգի հաջորդ՝ 4-րդ հարցը առնչվում էր ՀՀ Վայոց ձորի մարզում առողջապահության և սոցիալական ոլորտում նախորդ ինն ամիսների ընթացքում կատարված և ընթացքի մեջ գտնվող աշխատանքներին, որը ներկայացրեց մարզպետի տեղակալ Վասիլ Ասլանյանը:

Առողջապահության ոլորտ: 2025թ.առաջին կիսամյակում մարզում գործում էր 4 բժշկական հաստատություն, որոնցից 1-ը մատուցում է հիվանդանոցային ծառայություններ, 1-ը ամբուլատոր և հիվանդանոցային, իսկ 2-ը՝ պոլիկլինիկաներ են և մատուցում են արտահիվանդանոցային ծառայություններ: 2025թ 2-րդ եռամսյակից մարզպետի աշխատակազմի ենթակայության առողջապահական հիմնարկները մնացել են Եղեգնաձորի և Վայքի պոլիկլինիկաները: Մարզային ենթակայության բուժհաստատություններում աշխատում են 261 մարդ, որից 62 բժիշկ, 136 բուժքույր:

2025 թվականի ընթացքում իրականացվել է 77398,8 հազ դրամի վճարովի ծառայություններ: Պետական պատվերով բուժման և հետազոտման նպատակով 12 քաղաքացու համար միջնորդագրեր են ուղարկվել առողջապահության նախարարություն, որոնցից 10-ը ստացել են դրական պատասխան: Առողջարանային վերականգնողական բուժման են ուղեգրվել 16 երեխա իրենց խնամակալների հետ: Ապարանի վերականգնողական առողջարանային կենտրոն է ուղեգրվել հաշմանդամություն ունեցող 1 երեխա:

Եղեգնաձորի ԲԿ-ում գործող "Հայկական ակնաբուժության նախագիծ" բարեգործական հիմնադրամի (ՀԱՆ ԲՀ) հիմնած Վահագն Ագլամիշյանի անվ. մարզային ակնաբուժական կենտրոնում 2025 թվականին իրականացվել է 73 վիրահատություն:2025թ.-ին Առողջապահության Ազգային Ինստիտուտի, Ազգային բժշկական պալատի, ՀՕՖ-ի, ՅՈՒՆԻՍԵՖԻ, Հերացու անվան պետական բժշկական համալսարանի և միջազգային կազմակերպությունների հետ համատեղ ազմակերպվել են բազմաթիվ վեբինարներ, գիտաժողովներ, սեմինարներ, դասընթացներ ավագ և միջին բուժաշխատողների, նեղ մասնագետների համար և տրվել են ՇՄԶ կրեդիտներ (միջոցառումները կրում են շարունակական բնույթ): Զինկոմիսարիատի բժշկական հանձնաժողովի բժիշկ մասնագետների համար կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ:Նպատակային ուսուցման համար կատարվել են 5 ուղեգրում ՀՀ ԵՊԲՀ:

Իրականացվել և իրականացվում է կենտրոնացված և մարդասիրական խողովակներով հատկացված դեղորայքի ներմարզային բաշխում՝ կարգավորումներն իրականացվում են ***ԱՐՄԵԴ*** համակարգով: Իրականացվել են այցելություններ մարզային ենթակայության բժշկական կազմակերպություններ, ԲՄԿ-ներ մշտադիտարկման, և խնդիրների վերհանման, կարիքի գնահատման նպատակներով:

Լաբորատորիաներում որակի կառավարման համակարգի ներդրման համապատասխանությունը գնահատելու նպատակով ստեղծված աշխատանքնային խմբի հետ իրականացվել է լաբորատոր ծառայության որակի գնահատում՝ աշխատանքները շարունակվում են:Բժշկական կազմակերպություններում իրականացվել են բաց դռների օրեր:

Պատվաստումային գործընթացը գտնվում է ուշադրության կենտրոնում: Իրականացվում են գրիպի դեմ, ԿԿԽ, ԱԿԴՓ-Մ, ՄՊՊ և այլ պատվաստումներ՝ համաձայն պատվաստումային օրացույցի: 2025 թվականին Վայոց ձորի մարզում պատվաստումներում ընդգրկվածության ցուցանիշը կազմում է 98%–99%: ՀՀ-ում տուբերկուլոզի և ՄԻԱՎ-ի դեմ պայքարի դրամաշնորհային ծրագրի շրջանակներում մարզային պոլիկլինիկաների կազմում գործող ամբուլատորիաներին տրվել են 24 հատ պլանշետներ:2025 թվականին իրականացվել է «Առողջ ապրելակերպի» իրազեկման հանրապետական արշավ վայոցձորյան միջոցառում:

Կարմիր խաչի միջազգային կազմակերպության կողմից Վայոց ձորի մարզի բժշկական կազմակերպություններում իրականացվել են ֆինանսական ներդրումներ, մասնավորապես՝ 5 բժշկական կազմակերպությունում կառուցվել են արևային կայաններ, Վայոց ձորի բժշկական կենտրոնում կառուցվում է անհետաձգելի բուժօգնության վիրահատական բաժանմունք:Արտավան բնակավայրում կառուցվում է նոր բուժակ մանկաբարձական կետ:

Սոցիալական ոլորտի հարցերի բնագավառ: Ղարաբաղից տեղահանված ընտանիքների սոցիալական ապահովություն-2025 հոկտեմբերի 01-ի դրությամբ մարզում բնակվում է Ղարաբաղից տեղահանված 297 ընտանիք և 1066 անձ: Պարբերաբար հանդիպումներ են կազմակերպվել տեղահանված բնակչության հետ: Ներկայացրվել են աջակցության ծրագրերը, բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագրում իրականացված բարեփոխումները: Արձանագրվել են ԼՂ քաղաքացիների կողմից բարձրացված հարցերը և աշխատանքներ են տարվել դրանց լուծման ուղղությամբ : Տեղահանված բնակչության աշխատունակ տարիքի բնակչության 55%-ը աշխատում են տարբեր բնագավառներում: ՀՀ քաղաքացիություն են ստացել տեղահանված բնակչության 45%-ը՝ գործընթացը շարունակվում է:

«Առաքելություն Հայաստան» և «Սիվիտտա Էմ» կազմակերպությունների աջակցությամբ կազմակերպվել է հանդիպումներ փաստաբանների հետ և փաստաթղթերի հետ խնդիրներ ունեցող անձանց համար իրավական խորհրդատվություն է տրամադրվել: Հայկական բարեգործական ընդհանուր

միության կողմից տեղահանված բնակչությանը տրամադրվել է պարենային փաթեթներ:

Զինծառայողների և նրանց ընտանիքների սոցիալական ապահովություն. 2020 թվականի Արցախյան 44-օրյա պատերազմի, 2022 թվականի սեպտեմբերի 13-ի ադրբեջանական ագրեսիայի, մարտական հերթապահության ժամանակ զոհված, անհայտ կորած, հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողների ընտանիքների սոցիալական խնդիրների լուծման ուղղությամբ ամենօրյա աշխատանք է տարվել: Օրենքով սահմանված հատուցումները ընտանիքները ստանում են: Այցելել ենք զոհված զինծառայողների 70 ընտանիքների: Աշխատանքներ ենք տարել բարձրացված հարցերի լուծման համար: 5 ընտանիքների ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <Այլ նպաստներ բյուջեից> հոդվածով նախատեսված ծախսերից տրամադրվել է ֆինանսական աջակցություն: ՀՀ Կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 6-ի N 1419-Ն որոշմամբ սահմանված կարգով շարունակվում է բնակարանի կարիքավոր զոհված և հաշմանդամ դարձած զինծառայողների ընտանիքների հաշվառումը: 2025թ. հակտեմբերի 1-ի դրությամբ հաշվառված է 44 ընտանիք:

2006 թվականին հաշվառված 2 հաշմանդամություն ունեցող նախկին զինծառայողներ բնակարանի գնման վկայագիր են ստացել և բնակարան են գնել: Բնակարանի գնման վկայագիր է ստացել 1 զոհված զինծառայողի ընտանիք և 6 ամսվա ընթացքում այն պետք է իրացնի:Արցախյան պատերազմների, մարտական հերթապահության ժամանակ վիրավորված և հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողների առողջական խնդիրների լուծման համար աշխատել ենք բարեգործական հասարակական կազմակերպության հետ: Հաշմանդամություն ունեցող, կարիքավոր 11 զինծառայողների ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <Այլ նպաստներ բյուջեից> հոդվածով նախատեսված ծախսերից տրամադրվել է դրամական օգնություն: Զինվորական ծառայության ժամանակ հաշմանդամություն ձեռք բերած 1 նախկին զինծառայողի գործերը ներկայացրել ենք ՀՀ ՊՆ՝ հատուցումները ստացել է:

Տարեցներ և հաշմանդամություն ունեցող անձինք:Հաշմանդամություն ունեցող անձանց ներառման աշխատանքները համակարգում է <<Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ՀՀ Վայոց ձորի մարզային հանձնաժողովը>>: Հանձնաժողովը համագործակցում է հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող պետական, մարզային, համայնքային կառույցների, սոցիալական ծառայություններ տրամադրող հասարակական, բարեգործական կազմակերպությունների հետ:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրացմանը խոչընդոտող, զգալի ներդրում չպահանջող խնդիրները ներկայացվել է ՀՀ կառավարություն: Մեր առաջարկությունը՝ հասարակական, արտադրական նշանակության շենք-շինությունների կայանատեղիներում հաշմանդամություն ունեցող անձանց տեղափոխող մեքենաների համար տեղհատկացում տրամադրելու վերաբերյալ, ընդունվել է և պարտադիր պահանջ է դարձել :

Տարեցների հիմնախնդիրները ևս մեր ուշադրության կենտրոնում եմ՝ հոկտեմբերի 1-ին տարեցների միջազգային օրվա կապակցությամբ այցելել ենք 5 հարյուրամյա տարեցներին, տրամադրել ենք նվերներ և ֆինանսական աջակցություն: Մայիսի 9-ին այցելել և շնորհավորել ենք Հայրենական Մեծ պատերազմի վետերան, 99 ամյա Խորեն Սերգեյի Հարությունյանին :

Մարզի բնակչության սոցիալական վիճակը Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված սոցիալական աջակցության նպատակով ծախսերը 2025 թվականի համար կրճատվել է 33%-ով:

Սոցիալական արդարությունը պահպանելու՝ համաչափ և հասցեական օգնություն տրամադրելու համար, շրջաբերականներ ենք ուղարկել համայնքապետարաններ՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված կարիքավոր ընտանիքների ընտրության և կրկնակի դիմումների մուտքը կանխելու համար: 9 ամիսների ընթացքում դրամական օգնություն է տրամադրվել 424 սոցիալապես անապահով քաղաքացիների: Կատարել ենք 35 տնային այցելություններ, որոնց արդյունքում վեր

են հանվում առավել անապահով քաղաքացիների խնդիրները և ըստ հնարավորության լուծումներ են տրվում: Կազմակերպվել է ՀՀ Վայոց ձորի մարզպետի հետ քաղաքացիների հանդիպում: Քաղաքացիների սոցիալական խնդիրներն առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության ուշադրության կենտրոնում են, և վարչության գործառույթների շրջանակներում նրանց սոցիալական բեռի մեղմմանն ուղղված համապատասխան աշխատանքներ են տարվում:

Աշխատանք բարեգործական կազմակերպությունների հետ: « Ծնողազուրկ Հայ Երեխաների Օգնության Միություն /SOAR –Հայաստան/» բարեգործական հիմնադրամի հետ ՀՀ Վայոց ձորի մարզում իրականացրել ենք «Մոր և մանկան առողջության ծրագիր», որի նպատակն է հղիության ընթացքում կանանց շրջանում բարձրացնել վերարտադրողական առողջության վերաբերյալ իրազեկվածությունը, խթանել առողջ ապրելակերպը և ապահովել մոր և մանկան բարեկեցությունը: «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության իրավաբան–փաստաբան խորհրդատուներների հետ Լեռնային Ղարաբաղից տեղահանված բնակչության համար կազմակերպվել է իրավաբանական խորհրդատվություն՝ ՀՀ քաղաքացիություն ստանալու ընթացակարգի, գործող իրավական ակտերի, Լեռնային Ղարաբաղում թողած փաստաթղթերի վերականգնման համար անհրաժեշտ գործընթացի, ԼՂ-ից բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագրի և կատարված փոփոխությունների վերաբերյալ:

<<Սիվիտտա էյեմ>> ՓԲԸ-ի ներկայացուցիչները Լեռնային Ղարաբաղից տեղահանված և մարզի բնակչության 5 ֆոկուս խմբերի անդամներին ներկայացրել են հանրային պաշտպաններին դիմելու ընթացակարգերը: Քաղաքացիներին տրամադրել են հանրային պաշտպանների գտնվելու վայրի վերաբերյալ տեղեկատվություն: Թուֆենկյան հիմնադրամի հետ կազամակերպել ենք ԼՂ-ից տեղահանված բնակչության հետ հանդիպումներ Սվարանց բնակավայրում իրականացվող բնակարանաշինության ծրագրերի վերաբերյալ:

Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտի վերաբերյալ: Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել է աշխատանք

ռազմական գործողություններից տուժած, ընտանեկան տարաձայնություններ ունեցող, բազմազավակ, սոցիալապես անապահով, հաշմանդամություն և այլ խնդիրներ ունեցող ընտանիքների, առանց ծնողական խնամքի մնացած, բռնության ենթարկված, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, կրթությունից խուսափող և հակասոցիալական վարք դրսևորող, սոցիալ-հոգեբանական աջակցության կարիք ունեցող երեխաների և նրանց ընտանիքների հետ: Կատարվել է համագործակցություն ՀՀ ՆԳՆ համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Եղեգնաձորի, Վայքի և Ջերմուկի բաժինների հետ՝ կանխարգելիչ քարտային հաշվառման վերցված իրավախախտ և հանցագործություն կատարած անչափահասների, բռնության ենթարկված անձանց և նրանց ընտանիքների հետ, այցելություններ և մասնագիտական աշխատանք՝ կրկնակի իրավախախտումների կանխարգելման, ընտանիքում հաշտության վերականգնման ուղղությամբ: Հոկտեմբերի 15-ի դրությամբ ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՀՈԳՎ Եղեգնաձորի բաժնում բռնության գործով հաշվառվել է 12 անձ, Ջերմուկի բաժնում՝ բռնության գործով՝ 4 անձ, Վայքի բաժնում՝ բռնության գործով 9 անձ և 1 իրավախախտ անչափահաս: Տարվել է աշխատանք մուրացիկ, շահագործման, թրաֆիքինգի ենթարկված և կրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերման ուղղությամբ:

Իրականացվել է ընդհանուր խնամատարության գործընթաց: Այժմ Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրում ունենք խնամատար մեկ ընտանիք:Ըստ գործող կարգի՝ բազմամասնագիտական խումբը կատարում է ամենամսյա այցելություններ ընտանիք՝ հոգեզավակի նկատմամբ իրականացվող խնամքի վերահսկողության նպատակով: Հաշվառվել է երեխա որդեգրելու ցանկություն հայտնած երկու քաղաքացի, որդեգրման գործընթացն ուժի մեջ է, հաշվառված անձինք խնամքի շուրջօրյա հաստատությունում պարբերաբար հանդիպում են նախընտրած երեխային:

Կատարվել է առանց ծնողական խնամքի մնացած մեկ երեխայի սկզբնական և կենտրոնացված հաշվառում: Իրականացվել է կրթությունից դուրս մնացած և դուրս մնալու վտանգում հայտնված երեխաների հաշվառում, համայնքային սոցիալական

աշխատողների աշխատանքների վերահսկում և կանոնակարգում էլեկտրոնային համակարգում, ընդհանուր բազայի հետ աշխատանք:

Կատարվել են այցելություններ մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններ՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության իրավունքի իրացման գործընթացում առկա խնդիրներին ծանոթանալու նպատակով, հանդիպումներ դպրոցների տնօրինության, մանկավարժների և խորը, ծանր ֆունկցիոնալության խանգարում ունեցող, տնային ուսուցում ստացող երեխաների ընտանիքների հետ՝ ուսուցման արդյունավետությունը դիտարկելու նպատակով:

Կատարվել է շարունակական աշխատանք «Նորք» տեղեկատվական համակարգի «Մանուկ» ենթահամակարգում: 2025 թվականի հունվարից-հոկտեմբեր ժամանակահատվածում համակարգ է մուտքագրվել 59 երեխայի վերաբերյալ տեղեկատվություն: Իրականացվել է համակարգման և մեթոդական աշխատանք Մանկական զարգացման հիմնադրամի Ջերմուկ, Վայք և Արենի համայնքների «Զարման» կենտրոնների մասնագետների հետ՝ մուտքագրման գործընթացի ուղղությամբ: Տարվել է աշխատանք Արենի համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի հետ՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխայի հոգաբարձության գործընթացի և Խաչիկ բնակավայրի ամուսնալուծված ընտանիքի երեխայի բնակության վայրի և դպրոցի տեղափոխման խնդրի լուծման ուղղությամբ:

Ոլորտի մասնագետները մասնակցել են

- Եղեգնաձոր համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի ընդլայնված նիստի՝ Արցախից տեղահանված ընտանիքի կրթությունից դուրս մնալու վտանգում հայտնված երեխայի վարքային խնդիրների և հանրակրթություն վերադարձնելու հարցի քննարկմանը,
- ՄՄԾ Ջերմուկի տարածքային կենտրոնի համակարգող խորհրդի ամենամսյա նիստերին, Ջերմուկի, Եղեգնաձորի և Վայքի տարածքային կենտրոնների աջակցող ցանցի տարածաշրջանային ֆորումներին,
- Արենի համայնքի իրավական և մասնագիտական հսկողության աշխատանքներին,

- «Հավասար ԵՄ-ը հանուն կանանց տնտեսական հզորացմանը Հայաստանում» ծրագրի շրջանակում «ՎԻՆՆԵԹ Գորիս» ՀԿ-ի կազմակերպած մարզային քննարկմանը,
- Երևանի «Արմենիա Մարիոթ» հյուրանոցում խնամատարության զարգացմանը նվիրված աշխատաժողովին,
- «Առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների արդյունավետ խնամատարության վերաբերյալ» վերապատրաստման 2-օրյա դասընթացին Հանքավանում,
- «Սոցիալական պաշտպանության համակարգը Հայաստանում» թեմայով առցանց վերապատրաստմանը:
- Հատուկ կարիքներ ունեցող երեխաների հետ աշխատող մասնագետները մասնակցել են Խարբերդի մանկատանը կազմակերպած «Ճախրուկ» ամենամյա միջազգային ներառական փառատոնին:

Համայնքների, կրթական հաստատությունների և հասարակական կառույցների հետ ունեցած համագործակցության շնորհիվ զոհված, հաշմանդամություն ձեռք բերած կամ հաշմանդամություն ունեցող զինծառայողների, աշխարհազորայինների, ծնողազուրկ ու անապահովության գնահատման համակարգում հաշվառված բազմազավակ ընտանիքների 7-13 տարեկան դպրոցահասակ 120 երեխա կարողացավ ամառային հանգիստն անցկացնել ՀՀ Կոտայքի մարզի «Հասմիկ» ճամբարում:

«Բարի մամա» բարեգործական ՀԿ-ի հետ համագործակցության արդյունքում Մարտիրոս և Խաչիկ սահմանամերձ բնակավայրերի խոցելի խմբերի 9-11 տարեկան դպրոցահասակ 30 երեխա իր ամառային հանգիստն անցկացրեց Սևանա լճի ափին՝ Շողակաթ գյուղի ճամբարում: ՀՀ ԱՍՀ նախարարության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակի համատեղ ծրագրի շրջանակում Եղեգնաձորում կայացավ խնամատարության գործընթացին նվիրված մասնագիտական հանդիպում՝ խնամատարությամբ հետաքրքրված անձանց բազան ընդլայնելու նպատակով:

Կազմակերպչական աշխատանք է իրականացվել «ՕքսԵՋեն» հիմնադրամի հետ՝ «Լինել նրա տեղում. Վերջ դնենք կանանց նկատմամբ բռնությանը Հայաստանում» և «Աջակցման կենտրոնները հանուն գենդերազգայուն մոտեցման» ծրագրերի

շրջանակում իրականացվող դասընթացների կազմակերպման և մասնակցության ուղղությամբ, «Երիտասարդական ավանգարդ» ՀԿ-ի հետ՝ Եղեգնաձոր և Վայք համայնքներում արձագանքման մոդելի գործարկման նպատակով: Տրամադրվել է տեղեկատվություն ընտանիքի, կանանց և երեխաների հիմնախնդիրներով զբաղվող պետական և հասարակական կառույցներին և շահագրգիռ անձանց: **Ընթացքի մեջ է՝**

- Երևանի «Մանկան տուն» ՊՈԱԿ-ում գտնվող երեխայի որդեգրման գործընթացը, կատարվել է համադրման աշխատանք, ընթանում են հաշվառված անձանց և որդեգրման ենթակա երեխայի հանդիպումներ,
- Պատրաստվում է ամփոփ տեղեկատվություն խնամակալության և հոգաբարձության մարմինների կողմից պարտադիր կրթությունից դուրս մնացած և դուրս մնալու վտանգում հայտնված երեխաների հետ իրականացրած աշխատանքների վերաբերյալ՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարություն ներկայացնելու նպատակով:

Օրակարգի 5-րդ հարցի շուրջ ելույթ ունեցավ ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ Արամ Կոստանյանը՝ ներկայացնելով ՀՀ Վայոց ձորի մարզում 2024 թվականից տեղափոխված, 2025 թվականին հաստատված սուբվենցիոն ծրագրերի ընթացքը:

2024 թվականին հավանության արժանացած 10 ծրագրից 2025 թվական տեղափոխվել է **7 ծրագիր (5 ենթածրագիր)**, որից Ջերմուկ համայնք՝ 1 ծրագիր (3 ենթածրագիր), Եղեգնաձոր համայնք՝ 1 ծրագիր, Վայք համայնք՝ 1 ծրագիր, Արենի համայնք՝ 2 ծրագիր (որից տեղափոխվել է մեկ ծրագրի 2 ենթածրագիր, մյուսներն ավարտված են և պետության մասնաբաժինը՝ վճարված), Եղեգիս համայնք՝ 2 ծրագիր:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔ՝ 3 ենթածրագիր

1.«Կեչուտ գյուղի հանդիսությունների սրահի հիմնանորոգում» ենթածրագիր

Ենթածրագրի ընդհանուր գումարը՝ 21 մլն 245 հազ 838 ՀՀ դրամ, ենթածրագրի սկիզբ՝ 30.04.2025թ., ենթածրագրի ավարտ՝ 01.10.2025/ՀՀ կառավարության որոշմամբ՝ մինչև 2025թ. նոյեմբերի 1/: Ենթածրագրի վերջնարդյունք՝ Կեչուտ գյուղում կունենանք 300քմ մակերեսով նորոգված տանիքով, 32,5 քմ մակերեսով նորոգված խոհանոցով, նոր ջեռուցման համակարգով, նորոգված 2 սանհանգույցով /1,89քմ և

5,7քմ/, 15,04 քմ նորոգված նախամուտքով և նոր գույքով կահավորված հանդիսության սրահ: Ենթածրագիրը տեղափոխվել է 2025 թվական, քանի որ սուբվենցիայի հայտերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի կողմից հաստատվել էր նախորդ տարվա ավարտին (2024թ.-ի սեպտեմբերի 26): Աշխատանքներն ավարտված են:

2. «Կեչուտ գյուղի բակային տարածքի աստիճանների և հենապատի կառուցում» ենթածրագիր:Ենթածրագրի ընդհանուր գումարը՝ 8 մլն 33 հազ 362 ՀՀ դրամ, ենթածրագրի սկիզբ՝ 06.05.2025թ., ենթածրագրի ավարտ՝ 19.08.2025/ՀՀ կառավարության որոշմամբ՝ մինչև 2025թ. նոյեմբերի 1/,ենթածրագրի վերջնարդյունք՝ Կեչուտ գյուղում կունենանք 1 նոր աստիճան՝ 60 մետր երկարությամբ ասֆալտապատ ճեմուղով և վերականգնված 100մ հենապատով: Ենթածրագիրը տեղափոխվել է 2025 թվական, քանի որ սուբվենցիայի հայտերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի կողմից հաստատվել էր նախորդ տարվա ավարտին (2024 թ.-ի սեպտեմբերի 26): Կատարվել է աշխատանքների՝ 85 %-ը: 20.10.2025թ. դրությամբ կատարվել են հողային աշխատանքներ, բետոնե հենապատերի կառուցման աշխատանքներ:

3. «Գնդեվազ գյուղի գերեզմանատուն տանող աստիճանների կառուցում» ենթածրագիր,ենթածրագրի ընդհանուր գումարը՝ 10 մլն 698 հազ 964 ՀՀ դրամ, ենթածրագրի սկիզբ՝ 05.05.2025թ, ենթածրագրի ավարտ՝ 13.08.2025. /ՀՀ կառավարության որոշմամբ՝ մինչև 2025թ. նոյեմբերի 1/,ենթածրագրի վերջնարդյունք՝ Գնդեվազ գյուղում՝ 63մ երկարությամբ ճեմուղով, 10 մ նորոգված հենապատով 1 աստիճան: Ենթածրագիրը տեղափոխվել է 2025 թվական, քանի որ սուբվենցիայի հայտերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի կողմից հաստատվել էր նախորդ տարվա ավարտին (2024 թ.-ի սեպտեմբերի 26): Աշխատանքներն ավարտված են:

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ՝ 1 ծրագիր

4. «Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի Վարդան Զորավար փողոցի բարեկարգում և ասֆալտապատում» ծրագիր, ծրագրի ընդհանուր գումարը՝ 98 մլն 040 հազ 340 ՀՀ դրամ , ծրագրի սկիզբ՝ 21.10.2024թ., ծրագրի ավարտ՝ 21.03.2025թ. /ՀՀ կառավարության որոշմամբ՝ մինչև 2025թ. նոյեմբերի 1/, ծրագրի վերջնարդյունք՝

670 գծամետր բարեկարգված ճանապարհ, որի արդյունքում երեխաները, տարեցները և հաշմանդամություն ունեցող անձինք կկարողանան ազատ և անվտանգ տեղաշարժվել: Ծրագիրը տեղափոխվել էր 2025 թվական, քանի որ նախագծով նախատեսված էր շինարարական աշխատանքների ընթացքը սահմանել 5 ամիս: Ծրագիրն ավարտված է: Հոկտեմբերի 9-ի թիվ 1439-Ն որոշմամբ պետության մասնաբաժինը տրամադրված է /44,118,1 ՀՀ դրամ/:

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔ՝ 1 ծրագիր

5.«Վայք համայնքի Սերս, Բարձրունի, Խնձորուտ և Նոր Ազնաբերդ բնակավայրերի գյուղամիջյան փողոցների ասֆալտապատման աշխատանքներ» ծրագիր, ծրագրի ընդհանուր գումարը՝ 165 մլն 557 հազ 288 ՀՀ դրամ, սկիզբ՝ 28.06.2024թ., ավարտ՝ 04.02.2025թ. /ՀՀ կառավարության որոշմամբ՝ 2025թ. մինչև նոյեմբերի 1/: Ծրագրի վերջնարդյունք՝ կասֆալտապատվեն Սերս բնակավայրում ՝726 գծմ, Բարձրունի բնակավայրում՝ 1182գծմ, Խնձորուտ բնակավայրում՝ 613 գծմ, Նոր Ազնաբերդ բնակավայրում՝ 266 գծմ ճանապարհներ: Ծրագիրը տեղափոխվել էր 2025 թվական՝ համայնքի ֆոնդային բյուջեում գումար չլինելու պատճառով: Ներկա պահին ծրագիրն ավարտված է:

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔ՝ 1 ծրագիր, 2 ենթածրագիր

6. «Արենի համայնքի Արենի բնակավայրում մանկապարտեզ տանող ճանապարհի կառուցում՝ սալարկմամբ» ծրագիր, ծրագրի ընդհանուր գումարը՝ 157 մլն 029 հազ 330 ՀՀ դրամ, սկիզբ՝ 30.05.2024թ.,ավարտ՝ 29.12.2024թ. /ՀՀ կառավարության որոշմամբ՝ մինչև 2025թ. նոյեմբերի 1/; վերջնարդյունք՝ կունենանք 1030 գծմ ճանապարհ:Ծրագիրը տեղափոխվել էր 2025 թվական՝ նախագծում փոփոխություն կատարելու պատճառով. շինարարությունը դադարեցվել էր մոտավորապես 2 ամիս /լրացուցիչ հենապատի կառուցում/: Կատարվել է աշխատանքների՝ 90%-ը:

7. «Գնիշիկ բնակավայրում «Կարմիր քար» ջրագծի մասնակի նորոգում» ենթածրագիր, ենթածրագրի ընդհանուր գումարը՝ 4 մլն 404 հազ 400 ՀՀ դրամ, սկիզբ՝ 06.06.2024թ., ավարտ՝ 30.12.2024թ. /ՀՀ կառավարության որոշմամբ՝ մինչև 2025թ. նոյեմբերի 1/, վերջնարդյունք՝ կունենանք 1 աղբյուրակապ,42 մ ջրագիծ և 70մ ճանապարհ: Շինարարի՝ լիցենզիա չունենալու պատճառով ենթածրագիրը

տեղափոխվել է 2025 թվական:Խմելու ջրագծի փոփոխված տարբերակը ներկայացվել է մարզպետի աշխատակազմ, որից հետո՝ ՀՀ ՏԿԵՆ: Համայնքին առաջարկվել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հայտարարել մրցույթ՝ ապահովելով արդյունավետ, հնարավորինս թափանցիկ և նվազագույն ռիսկերով մրցութային գործընթաց: Հայտարարվել է կրկնամրցույթ: Մրցույթը չի կայացել, մասնակից չի եղել:

8. «Խաչիկ բնակավայրում «40 աղբյուրներ» ջրաղբյուրի խմելու ջրատարի 3.0կմ ջրագծի կառուցում» ենթածրագիր, սկիզբ՝ 06.06.2024թ., ավարտ՝ 30.12.2024թ. /ՀՀ կառավարության որոշմամբ՝ մինչև 2025թ. նոյեմբերի 1/, վերջնարդյունք՝ կունենանք 3 կմ ջրագիծ: Ենթածրագիրը տեղափոխվել էր 2025 թվական տեղանքների բարձր և լեռնային գոտում գտնվելու հանգամանքի և կլիմայական պայմանների պատճառով: Ծրագիրն ավարտված է:

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔ՝ 2 ծրագիր

9. «Եղեգիս համայնքի Շատին, Քարագլուխ, Հերմոն բնակավայրերի խմելու ջրագծերի կառուցում և Աղնջաձոր բնակավայրի ՕԿՋ-ի կառուցման աշխատանքներ» ծրագիր, ծրագրի ընդհանուր գումարը՝ 46 մլն 020 հազ ՀՀ դրամ, սկիզբ՝ 10.05.2024թ., ավարտ՝ 31.08.2024թ. /ՀՀ կառավարության որոշմամբ՝ մինչև 2025թ. նոյեմբերի 1/, վերջնարդյունք՝ կվերակառուցվեն Քարագլուխ բնակավայրում՝ 1520 մ խմելու ջրագիծ, Հերմոն բնակավայրում՝ 1250 մ խմելու ջրագիծ, Շատին բնակավայրում՝ 470 մ խմելու ջրագիծ, Աղնջաձոր բնակավայրում կկառուցվի 10մ^3 ծավալով ՕԿՋ: Ծրագիրը տեղափոխվել էր 2025 թվական տեխհսկիչի լիցենզիայի ավարտման պատճառով: Ներկա պահին շինարարական աշխատանքներն ավարտվել են:

10. «Եղեգիս համայնքի Շատին, Քարագլուխ, Հորբատեղ, Հորս, Արտաբույնք, Թառաթումբ և Աղնջաձոր բնակավայրերի ոռոգման առուների վերանորոգում» ծրագիր, ընդհանուր գումարը՝ 81 մլն 170 հազ ՀՀ դրամ, սկիզբ՝ 20.05.2024թ., ավարտ՝ 30.10.2024թ. /ՀՀ կառավարության որոշմամբ՝ մինչև 2025թ. նոյեմբերի 1/, վերջնարդյունք՝ կվերանորոգվեն Քարագլուխ բնակավայրում 184 մ, Շատին բնակավայրում՝ 500 մ, Հորս բնակավայրում՝ 180 մ, Հորբատեղ բնակավայրում՝ 150մ, Թառաթումբ բնակավայրում՝ 100 մ, Արտաբույնք բնակավայրում՝ 200մ ոռոգման

առուներ: Ծրագիրը տեղափոխվել էր 2025 թվական՝ տեխհսկիչի լիցենզիայի ավարտման պատճառով:Ծրագիրն ավարտված է:

2023 թվականից 2025 թ. տեղափոխված է 1 ծրագիր

1. «Արենի համայնքի Ելփին բնակավայրում մանկապարտեզի շենքի կառուցում» ծրագիր, ընդհանուր գումարը՝ 334 հազ 340 մլն 000 ՀՀ դրամ, սկիզբ՝ 20.05.2023թ., ավարտ՝ 29.05.2025թ. /ՀՀ կառավարության որոշմամբ՝ 2025թ. մինչև նոյեմբերի 1/, ծրագրի վերջնարդյունք՝ կառուցված մանկապարտեզում 60 սանի համար հնարավոր կլինի իրականացնել ուսումնադաստիարակչական աշխատանքներ: Ծրագիրը տեղափոխվել էր 2025 թվական, քանի որ նախագծով նախատեսված էր շինարարական աշխատանքների ընթացքը սահմանել 24 ամիս: Աշխատանքներն ավարտվել են:Լրացուցիչ կոյուղու մաքրման կայան է կառուցվում, որի պատճառով հնարավոր է աշխատանքների ավարտը 1 ամսով հետաձգվի:

2025 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ Է ԱՐԺԱՆԱՑԵԼ 11 ԾՐԱԳԻՐ

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ՝ 5 ծրագիր

1"«Եղեգնաձոր համայնքի Մալիշկա բնակավայրի ներհամայնքային փողոցների ասֆալտապատում», ծրագրի բյուջեն՝ 146 068 390 ՀՀ դրամ

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է ունենալ 4347 քմ բարեկարգված տարածք, որի արդյունքում երեխաները, տարեցները և հաշմանդամություն ունեցող անձինք կկարողանան ազատ և անվտանգ տեղաշարժվել:

2. **«Եղեգնաձոր համայնքի Գլաձոր բնակավայրի ներհամայնքային փողոցների ասֆալտապատում» ծրագիր,** ծրագրի բյուջեն՝ 96 667 200 ՀՀ դրամ

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է ունենալ 6,167.5 քմ բարեկարգված տարածք, որի արդյունքում երեխաները, տարեցները և հաշմանդամություն ունեցող անձինք կկարողանան ազատ և անվտանգ տեղաշարժվել:

3.ՀՀ Վայոց ձոր մարզի Եղեգնաձոր համայնքի նոր քաղաքային գերեզմանոցի կառուցում, ծրագրի բյուջեն՝ 48 703 800 ՀՀ դրամ

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալում ենք ունենալ նոր քաղաքային գերեզմանոց, որը կունենա ավտոկայանատեղի, սանհանգույց: Գերեզմանոցի

տարածքը շրջապատված կլինի ցանկապատով, կանչապատ հատվածով, կտեղադրվեն նաև դարպասներ:

4. **ՀՀ Վայոց ձոր մարզի Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի թիվ 2 և թիվ 5 մանկապարտեզների բակերի բարեկարգում**, ծրագրի բյուջեն՝ 89 214 930 ՀՀ դրամ

5. **Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր, Մալիշկա, Գետափ, Գլաձոր և Վերնաշեն բնակավայրերի ոռոգման ցանցի վերակառուցում**, ծրագրի բյուջեն՝ *435,425,730 ՀՀ դրամ*

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔ՝ 2 ծրագիր

1. **«Վայք համայնքի Մարտիրոս բնակավայրի 3-րդ փողոցի հիմնանորոգում» ծրագիր,** ծրագրի ընդհանուր գումարը՝ **91 մլն 426 հազ 720 ՀՀ դրամ,**

Ծրագրի վերջնարդյունք՝ 960 գծամետր բարեկարգված ճանապարհ, որի արդյունքում երեխաները, տարեցները և հաշմանդամություն ունեցող անձինք կկարողանան ազատ և անվտանգ տեղաշարժվել:

2. **«Վայք համայնքի Գոմք, Զառիթափ, Արտավան, Սարավան, Ազատեկ, Արին, Փոռ, Զեդեա, Հերհեր բնակավայրերի փողոցների և Վայք քաղաքի Իսրայել Օրի փողոցի ասֆալտապատում» ծրագիր,** ծրագրի ընդհանուր գումարը՝ **477 մլն 867 հազ 140 ՀՀ դրամ**

Ծրագրի վերջնարդյունք՝ Սարավան բնակավայրի 3-րդ, 5-րդ, 7-րդ փողոցների 501, Արտավան բնակավայր 1-ին փողոց՝ 445, Գոմք բնակավայրի 4-րդ, 5-րդ փողոցներ՝ 922, Արին բնակավայրի 1-ին և 6-րդ փողոցների՝ 475, Հերհեր բնակավայրի 18-րդ փողոցի՝ 767, Ազատեկ բնակավայրի 2-րդ փողոցի՝ 527, Փոռ բնակավայրի 2-րդ, 3-րդ և 6-րդ փողոցների ՝ 582, Զառիթափ բնակավայրի 8-րդ, 3-րդ, 12-րդ և 3-րդ փողոցի 1-ին նրբանցք փողոցների՝ 1904, Զեդեա բնակավայրի 3-րդ փողոցի՝ 590, Վայք քաղաքի Իսրայել Օրի փողոցի՝ 217 գծամետր բարեկարգված ճանապարհ, որի արդյունքում երեխաները, տարեցները և հաշմանդամություն ունեցող անձինք կկարողանան ազատ և անվտանգ տեղաշարժվել:

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔ՝ 2 ծրագիր,

1. **«Արենի համայնքի Արփի բնակավայրում 940 գծմ ոռոգման ջրի ներքին ցանցի կառուցում»** ծրագիր, ծրագրի գումարը՝ 17 մլն 450 հազար ՀՀ դրամ

2. «**Արենի համայնքի Արենի բնակավայրի խմելու ջրի ֆիլտրող կառուցվածքի կառուցում** /ենթածրագրի գումարը՝ 117մլն 729 հազար 400 ՀՀ դրամ/, **Արփի բնակավայրում «Ջրովանքի ձոր» տարածքում խմելու ջրագծի արտաքին ցանցի 500գծմ հատվածի հիմնանորոգում** / ենթածրագրի գումարը ՝ 12 մլն 169 հազար 700 ՀՀ դրամ/, **Ելփին բնակավայրում խմելու ջրի ՕԿՋ-ի և ներքին ցանցի կառուցում** / ենթածրագրի գումարը՝ 275 մլն 954 հազար 610 ՀՀ դրամ /, **Չիվա բնակավայրում խմելու ջրի ՕԿՋ-ի և** ներքին **ցանցի կառուցում» ծրագիր** /ենթածրագրի գումարը՝ 254 մլն 766 հազար 600 ՀՀ դրամ/:

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔ՝ 2 ծրագիր

1. **«Եղեգիս համայնքի Քարագլուխ բնակավայրի խմելու ջրագծի կառուցում» ծրագիր,** ծրագրի ընդհանուր գումարը՝ **16 մլն 575 հազ 355 ՀՀ դրամ,** ծրագրի վերջնարդյունք՝ Քարագլուխ բնակավայրում կկառուցվի 1500 գծմ մետաղյա խողովակներով ջրագիծ:

2. **«Եղեգիս համայնքի Քարագլուխ, Արտաբույնք, Գողթանիկ, Սալլի, Աղնջաձոր, Հորբատեղ, Հորս և Թառաթումբ բնակավայրերի ոռոգման առուների կառուցում» ծրագիր,** ընդհանուր գումարը՝ **93 մլն 005 հազ 901 ՀՀ դրամ**, ծրագրի վերջնարդյունք՝ կվերանորոգվեն Քարագլուխ բնակավայրում 210գծմ, Արտաբույնք բնակավայրում՝ 252գծմ, Գողթանիկ բնակավայրում՝ 612,20գծմ, Սալլի բնակավայրում՝ 200գծմ, Աղնջաձոր բնակավայրում՝ 250գծմ, Հորբատեղ բնակավայրում՝ 200գծմ, Հորս բնակավայրում՝ 200գծմ և Թառաթումբ բնակավայրում՝ 295գծմ ոռոգման առուներ:

Օրակարգի մյուս հարցերի շուրջ ելույթ ունեցան համայնքների ղեկավարները, ներկայացուցիչները՝ առավել մանրամասն ներկայացնելով համայնքներում սուբվենցիոն ծրագրերի ընթացքը, հաճախ հանդիպող խնդիրները, լուծման տարբերակները, ընթացակարգային այլ հարցեր:

Օրակարգային հարցերից հետո ծավալվել են քննարկումներ, հնչել հարցադրումներ, տրվել պարզաբանումներ:

Առաջարկվել է՝

1. Տարբեր ծրագրերի միջոցով դիտարկել էլեկտրական հովիվներ ձեռք բերելու հնարավորությունները՝ գյուղատնտեսական տարածքներ վայրի կենդանիների մուտքը հնարավորինս կանխելու համար:

2. Մշտական ուշադրության ներքո պահել ոռոգման ջրի համակարգի խնդիրները, հնարավորինս մշակել խնդիրները լուծելու մեխանիզմներ:

3. Սուբվենցիոն ծրագրերը կազմելիս կարևորել բնակիչների, բնակավայրի առաջնային խնդիրները, հետևողական լինել աշխատանքների ժամկետների պահպանման և որակի ապահովման հարցերում:

4" Սուբվենցիաների տրամադրման կարգի փոփոխությամբ պայմանավորված՝ մարզպետի աշխատակազմում կազմակերպել հանդիպում-քննարկում համայնքապետարանների համապատասխան աշխատակիցների հետ:

5. Մշտապես ապահովել մարզպետի աշխատակազմ-համայնքապետարանի աշխատակազմ արդյունավետ համագործակցությունը՝ իրավական-մասնագիտական հսկողության շրջանակներում դիտարկվող օրենսդրական պահանջները անհրաժեշտ մակարդակով կատարելու համար:

6" Մշակել որոշ հարկատեսակների հավաքագրման տեմպերը բարելավելուն ուղղված մեխանիզմներ:

7" Հաշվի առնելով որոշ բնակավայրերում /մասնավորապես Արենի համայնքում/ խմելու ջրի սակավության խնդիրը՝ ստեղծել համապատասխան հանձնաժողով խնդրի ամբողջական և համապարփակ վերհանման և լուծման ուղիներ մշակելու նպատակով:

Ամփոփելով ՀՀ Վայոց ձորի մարզի խորհրդի հերթական նիստը՝ մարզպետ, խորհրդի նախագահ Վահագն Արսենյանը կարևորել է համագործակցված աշխատանքը, խնդիրները լուծելու կառուցողական մոտեցումները, աշխատանքների բնականոն շարունակականության ապահովումը և է՛լ ավելի բարելավումը:

ՀՀ Վայոց ձորի մարզպետ՝ Վահագն Արսենյան